ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ալավերդու համայնքապետարանի կարիքների համար սեյսմիկ ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված **ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/17** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 18.04.2025թ կնքված **ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/17** պայմանագրում 2025 թվականի 05.02-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված 4-րդ ենթակետը և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/17-ով գնման պայմանագիրում կատարվել է փոփոխություն 2-րդ չափաբաժնում:

Փոփոխության նկարագրություն – Սեյսմիկ ծառայություններ Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող մշակույթի պալատի շենքի (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների և եզրակացության տրամադրման ծառայություններ)-ի փոխարեն տալ Սեյսմիկ ծառայություններ Ալավերդի համայնքի Արևածագ գյուղի /նախկին կաթսայատան և պահեստի շենքի/տեխնիկական վիճակի հետազննություն և եզրակացություն :

Փոփոխության հիմնավորում - Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Պատվիրատու՝ Ալավերդու համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
Ի ԼՐՈՒՄՆ ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/17 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Քաղաք Ալավերդի
02.05.2025թ

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ.Ղումաշյանը, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ալենշին >> **ՍՊԸ**-ն,ի դեմս տնօրեն՝ Ա. Սահակյան, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ կատարող), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկա

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը և պատասխանատու ստորաբաժանման տրված եզրակացությունը համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 2-րդ չափաբաժին՝ Սեյսմիկ ծառայություններ Ալավերդի համայնքի Սանահին գյուղի նախկին գյուղապետարանի շենքի (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների և եզրակացության տրամադրման ծառայություններ) փոխարեն տալ Սեյսմիկ ծառայություններ Ալավերդի համայնքի Արևածագ գյուղի/նախկին կաթսայատան և պահեստի շենքի տեխնիկական վիճակի հետազննություն և եզրակացություն:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև Համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն օրենսդրությամբ սահմանված կարգով:
2.2 Սույն Համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/17 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը և գործում է ժամանակացույցին համապատասխան:
2.3 Պայմանագրի՝ սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:
2.4 Սույն համաձայնագիրը կազմված է երկու էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Զորավար Անդրանիկի 8/1 Ալավերդու համայնքապետարան ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական Վարչություն հ/հ 900262121057 ՀՎՀՀ 06967886 Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Ալենշին» ՍՊԸ ՀՀ, ք. Վանաձոր, Թումանյան 9Ա, 6 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050222197811001 ՀՎՀՀ 06962402 Տնօրեն՝ Ա. Սահակյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները